

## ԲՈՒՋԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՃՇՏՈՒՄ

### ՄԱՐԻԱՄ ՇՈԼԻՆՅԱՆ

Փափստոս Բուզանդի «Հայոց պատմության» չորրորդ դարձրված ժՁ գլխում այսպիսի տողեր կան. «Այս օրերից մեկում դեպք եղավ, որ Հայոց Արշակ թագավորը մտավ շրջելու Պարսից թագավորի ախոռներից մեկում. իսկ Պարսից թագավորի ախոռապետը նստած էր ներսը ախոռում. երբ նա թագավորին տեսավ՝ իսկի ուշադրություն չդարձրեց, ոչ մի մեծարանք ու պատիվ ցույց չտվեց, դեռ նրան ծաղրի և անարգանքի ենթարկեց՝ պարսկերեն լեզվով ասելով. «Այծ-հայերի թագավորը»<sup>1</sup>, ե՛կ այս խոտի խուրձի վրա նստի»<sup>1</sup>: Պատմությունն ավարտվում է նրանով, որ Արշակ թագավորին ուղեկցող սպարապետ Վասակ Մամիկոնյանը «տեղնուտեղը գլխատեց Պարսից թագավորի ախոռապետին հենց ախոռի մեջ»<sup>2</sup>, քանի որ չհանդուրժեց իր արքայի նկատմամբ դրսևորված անհարգալից վերաբերմունքը: Մեջբերված առաջին հատվածում, ինչպես նկատեցիք, №115 ծանոթագրության մասին հղում կա: Բուզանդի պատմության աշխարհարար թարգմանության և ծանոթագրությունների հեղինակը՝ Սա. Մալխասյանցը, №115 ծանոթագրության մեջ ասում է. «Բնագրում «Այծից – Հայոց արքայ»: Հայտնի է, որ հին ժամանակ սովորություն կար, որ գավառները մեկը մյուսին ծաղրական կամ արհամարհական մակդիրներ էին գնում, ինչպես աբուլեցոց՝ գոկ, հին նախիջևանցոց՝ խաչագող, նոր նախիջևանցոց՝ հածե, ախալցխացոց՝ կոռ, երևանցոց՝ շան ճրագ, պոլսեցոց՝ հոսոս և այլն»<sup>3</sup>: Հավելենք, որ երեուլթը այսօր էլ կա. հիշենք ապարանցիների, լուռեցիների, երևանցիների մակդիրները: Ստ. Մալխասյանցն այնուհետև եզրակացնում է. «Թվում է՝ այսպիսի մի մակդիր է եղել Պարսկաստանում հայերի համար՝ այս րառը, նկատի ունենալով, որ Հայաստանը լեռնոտ երկիր էր և ժողովուրդը մագլցում էր լեռների վրա՝ ինչպես այժմերը: Ախոռապետը ոչ թե անարգելու նպատակով, այլ հանաք անելով, այս մակդիրն է տալիս Արշակին: Հրավիրելով խոտի խուրձի վրա նստել: Նա ընկերական հանաք է արել, մոռանալով որ խոսում է թագավորի հետ»<sup>4</sup>: Որքանով է ընդունելի Ատ. Մալխասյանցի վերոհիշյալ մեկնաբանությունը: Կրկին Բուզանդից մեջբերենք մի պատահիկ. «...երբ նա թագավորին տեսավ՝ իսկի ուշադրություն չդարձրեց, ոչ մի մեծարանք ու պատիվ ցույց չտվեց, դեռ նրան ծաղրի և անարգանքի ենթարկեց՝ պարսկերեն լեզվով ասելով...»: Մի՞թե Բուզանդը պարզ և հասկանալի չի ասում, որ ախոռապետը Հայոց Արշակ թագավորին ոչ միայն ուշադրության չարժանացրեց, այլև

<sup>1</sup> Փ ա վ ս տ ո ս Բ ո շ ա ն դ. Հայոց պատմություն. Երևան, 1987, էջ 197:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 433:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 433-434:

ծաղրի ու անարգանքի էլ ենթարկեց: Բուզանդի խոսքում ի՞նչն է կասկածելի, ավելի ստույգ և հավաստի ինչպե՞ս պիտի ասվեր վերը մեջբերվածը: Ինչի՞ց ելնելով է Ստ. Մալխասյանցը եզրակացրել, թե ախոռապետը «Հանաք է արել, մոռանալով որ խոսում է թագավորի հետ»:

Փորձենք այս հարցերի պատասխանը տալ: Քանի որ Արշակը «մեծարվել է» «այծից հայոց արքայ» «տիտղոսով», փորձենք պարզել այժմ բառի իմաստը գրաբարում: Հր. Աճառյանի արմատական բառարանում «Այծ» հոգևածի տակ կարգում ենք. «+ԱՅՄ, ի հլ. «այծ անասունը» (սովորաբար էգի համար է գործածվում) ...»<sup>5</sup>: Շարունակության մեջ նշվում է նաև, որ Մուշի և Զեյթունի բարբառներում «բառս նշանակում է «այծի էգը՝ սկսած երեք տարեկանից»<sup>6</sup>: Ի դեպ, քանի որ հայոց լեզվում գոյականը սեռ չունի, օգտվենք ռուսերենից: Ռուսերենում «այծ» նշանակող և՛ արական, և՛ իգական սեռի բառեր կան՝ коза (женский род) և козел (мужской род): Պարսից ախոռապետի խոսքը իգական սեռի է՝ коза: Այնուհետև Աճառյանն ավելացնում է՝ «այսպես է նաև գրաբարի մէջ (այսինքն՝ գրաբարում «այծ»-ը ունեցել է коза (женский род) իմաստը (Մ. Շ.) մինչդեռ մյուս գավառականների և գրական լեզվի մեջ ընդհանուր նշանակություն ունի (ընդգծ.՝ Մ. Շ.): Գավառականներում այժմ փոխաբերաբար գործածվում է նաև երկյուղի... համար»<sup>7</sup>, և որպես այժմ բառի երկյուղ իմաստի գործածություն՝ Աճառյանը բերում է Ղարաբաղի բարբառից մի արտահայտություն՝ «այծ այծ լինել»<sup>8</sup>: Այս համադրումներն օգնում են եզրակացնել, որ պարսից ախոռապետն ամենևին էլ «Հանաք» չի արել, այլ հայոց Արշակ արքային, որին ուղեկցում էր սպարապետը՝ զորքերի հրամանատարը, անվանել է վախկոտ հայերի թագավոր, այսինքն՝ հայոց զորքում նա տղամարդ չի տեսել, բոլորին «էգ» է անվանել և վախկոտ: Այսինքն՝ վիրավորանք է հասցվել ոչ միայն թագավորին, այլ նաև սպարապետին՝ զորահրամանատարին: Բնականաբար, Բուզանդը պետք է գրեր, որ ախոռապետը «ծաղրի և անարգանքի ենթարկեց» հայոց արքային, իսկ զորքերի հրամանատարը՝ սպարապետ Վասակը, այլ կերպ ինչպե՞ս էր պացուցելու, թե հայոց զորքը տղամարդկանցից է կազմված, եթե ոչ տեղնուտեղը ախոռապետին գլխատելով: Դրա համար էլ Բուզանդը շարունակում է. «Երբ նրանք Պարսից աշխարհումն էին, օտար երկրում օտարների ներկայությունը՝ նա կարողացավ հանկարծ աներկյուղաբար այսպիսի բան գործել»<sup>9</sup>: Այս նախադասությունը մեջբերեցինք աշխարհաբար թարգմանությունում, սակայն ավելի ճիշտ կլինեք մեջբերել գրաբար բնօրինակը, քանի որ այնտեղ շատ էական մի բառ կա, որն աշխարհաբար թարգմանությունում մեջ պակասում է. դա անկասկած բառն է: Ահա նախադասության գրաբար բնօրինակը. «Իբրև ՚ի Պարսից աշխարհի էին, յայլոց ՚ի տեղի և ՚ի նոցուն հրապարակի աներկյուղ և անկասկած (ընդգծ.՝ Մ. Շ.) յանկարծօրէն զայսպիսի

<sup>5</sup> Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. Ա, Երևան, 1971, էջ 169:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 170:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Փ ա վ ս տ ո ս Բ ո լ զ ա ն դ, էջ 197:



զգործ կարաց գործել»<sup>10</sup>: Այս նախադասության մեջ անկասկած-ը շատ էական է. սպարապետն աներկյուղ և անկասկած = աներկբա – անվարան գլխատել է ախոռապետին, քանի որ վերջինս ոչ միայն խոցել է հայոց արքային, այլև սպարապետի առնական ինքնասիրությունն է ոտնահարել նրա զինվորներին անվանելով «այծ», ասել է թե՛ վախկոտ և կին:

Սակայն ո՞վ էր այդ անանուն ախոռապետը՝ Բուզանդի շնորհիվ առ այսօր հիշվող, որը համարձակվել է այդպես հանդգնաբար ծաղրել հայոց ռազմական ուժը, գորքը: Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել, թե Բուզանդի ապրած օրերում ի՞նչ իմաստ է ունեցել ախոռապետ բառը:

Կրիլիկյան հայերենում սպարապետ նշանակությունը ունենք գուցե ստաբլ բառը: Վերջինս ֆրանսերեն *connétable* բառի փոխառությունն է: Ռուսերենը ևս ունի այս բառը, որը նորից փոխառություն է ֆրանսերենից: Ֆրանսերեն – ռուսերեն բառարանում կարգում ենք՝ «*connétable* (m) *уст. коннетабль*»<sup>11</sup>: Իսկ բացատրական բառարանը *коннетабль* բառահոդվածում ասում է. «*Коннетабль* [фр. *connétable* первонач. "великий конюший" < ср. - лат. *comes stabuli* начальник конюшни] – во Франкском государстве – придворный служащий; во Франции до XVII в. – одно из высших должностных лиц – главнокомандующий армией»<sup>12</sup>: Հետևաբար՝ լատիներեն *comes stabuli*, ֆրանսերեն *connétable*, կրիլիկյան հայերեն գուցե ստաբլ, թե՛ ռուսերեն *коннетабль* բառերի սկզբնական նշանակությունն է ախոռապետ՝ «*ВЕЛИКИЙ КОНЮШИЙ, начальник конюшни*»: Իսկ ախոռապետը, ինչպես երևում է ռուսերեն նույն բառահոդվածից, բարձրագույն պաշտոնատար անձ է եղել՝ «*придворный служащий, одно из высших должностных лиц*» ավելի ստույգ՝ «*главнокомандующий армией*»:

Այսպիսով Բուզանդի «Հայոց պատմությունը» անմահացած հայտնի ախոռապետը նույն ինքը պարսկական զորքերի հրամանատարն էր՝ սպարապետը: Ինքնուրույն պարզ է արդեն, թե ինչ գործ ունեն նա հայոց արքայի կամ սպարապետի հետ: Պարսից ախոռապետը պատահական անձ չէր. կարելի է ասել իր ախոռներով նա պարսից «ռազմական տեխնիկան» էր ցուցադրում հայոց արքային և նրա ռազմական հրամանատարին՝ Վասակին, և մեծամտանում, թե իր զորքն առավել հզոր է, քան հայերին: Իսկ այն հանդուգն ծաղրի համար, թե հայ զինվորը վախկոտ է և կին, հատուցում է կյանքով:

Ամփոփենք՝ Բուզանդի «Հայոց պատմության» №115 ծանոթագրությունը պետք է ճշտվի՝ վերը փաստարկվածի համաձայն:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 196:

<sup>11</sup> Французско-русский словарь, М., 1962, с. 179.

<sup>12</sup> Словарь иностранных слов, М., 1987, с. 245.

## ПОПРАВКА В БУЗАНДОВЕДЕНИИ

МАРИАМ ШОЛИНЯН

## Резюме

В статье говорится о примечании №115 "Истории Армении" Павстоса Бузанда, в которой неверно толкуется мысль историка. Автор статьи указывает на то, что в IV части (глава 16) книги Бузанда (Ереван, 1987 г.) армянское слово *սյծ* (коза, жен. род) употреблено в значении "женщина", "трусливый". Раскрывая первоначальное значение армянского слова *սխրապետ* (коннетабль), автор указывает на то, что оно имело значение *սխրապետ* (главнокомандующий армией). Таким образом, персидский коннетабль = главнокомандующий армией = спарпет считает армянскую армию трусливой, за что армянский спарпет Васак Мамиконян отрубил ему голову.